

ՊԱՂԵՍՏԻՆ

(Տես երես 40.)

Զ. — Երուսաղեմ (շարունակութիւն) :

Իսկ այժմեան Երուսաղէմը, Ազրիա-
նուելիսկապիտոլեանն, գեղեցկապէս
զարդարեց Մեծն Կոստանդիանոս. բայց
կ'երևայ որ Ազրիանու տուած տարա-
ծութիւնը ճշտութեամբ պահած ըլլայ.
վասն զի բոլոր հին ստորագրութիւնք
կը միաբանին ամենայն մասամբ արդի
ճանապարհորդաց տուած տեղեկութեց
և ըրած ստորագրութեանց հետ. սա-
կայն միջին դարուն մէջ դեռ չէր ըն-
ծայեր այն խեղճութեանց և աղէտից
պատկերն, ինչ որ ներկայապէս կ'ըն-
ծայէ :

Այժմեան Երուսաղէմը տրապիզի մը
ձև ունի, որոյ անհաւասար կողմերն են
հիւսիսային և հարաւային կողմանքն :
Քաղաքը շուրջ շուրջանակի պարսպով
պատած է, զոր շինել տուաւ Սուլթան
Սուլէյման Ա. յամին 1534. որոյ եր-
կայնութիւնն է չորս հազար վեց հա-
րիւր երեսուն քայլ, բարձրութիւնն ե-
րեսուն ոտք, իսկ լայնութիւնն երեք
ոտք, և հարիւր քսան ոտք բարձրու-
թեամբ աշտարակներով ամրացած է :

Ունի եօթը դուռ, որոց գլխաւորն
են Ա. հիւսիսակողման՝ Դուռն Դամաս-
կոսի, արաբական ճարտարապետու-
թեամբ շինեալ, որ կը տանի 'ի Նա-
պլուս 'ի Նազարէթ և 'ի Դամասկոս :
Այս դուռն կոչի ևս Դուռն Պանդիստաց,
վասն զի երբեմն Պանդուխտք այս դու-
ռէն կը մտնային Երուսաղէմ : Սի-
մոն կիւրենացին այս Դամասկոսի դը-
րան կողմէն կու գար, երբ Յիսուսին
հանդիպեցաւ որ Գողգոթա կը տա-
րուէր : — Բ. Արևելակողման Դուռն Ս.
Ստեփանոսի, որ կը տանի Երկրով,
անցնելով Զիթենեաց լեռնէն : Արա-
բացիք կը կոչեն այս Դուռը Պապ-Սիդ-

դի-Մարիամ (Դուռն Տիրուհւոյն Մա-
րեմայ), վասն զի այս դռնէն կ'երթցուի
Տիրամօր գերեզմանը : Այս դուռը ե-
րուսաղեմայ դրանց մէջ ամենահինն է,
և Շաղկազարդին օրը ասկէց մտաւ Յի-
սուս Երուսաղէմ : — Գ. Հարաւակող-
ման Դուռն Աղբւսաց, որ Սելւովմայ ա-
ւազանը կը տանի : — Արևմտակողման
Դուռն Բեքլեմի, որ կը տանի Բեթ-
լեհէմ ու Հեբրոն :

Երուսաղէմ քաղաքը երեք գլխաւոր
ճամբայ ունի, ինչպէս կը գրէ Շաղո-
պրիան իր Ուղղեցոյց մատենիւն ¹ մէջ.
և են Ա. Հարադ-պապ-էլ-Ամուռո (Ճա-
նապարհ սեան Դրան), որ կը կտրէ քա-
ղաքը հիւսիսէն դէպ 'ի հարաւ. Բ.
Սուր-էլ-Քէպիր (Ճանապարհ մեծի շու-
կային), որ կ'ընթանայ յարևմտից յա-
րևելս. Գ. Հարադ-էլ-Ալաւ (Ճանա-
պարհ չարչարանաց) որ Աստուածա-
ծնի դռնէն կը սկսի, կ'անցնի Պիղատո-
սին պալատին սուղնէն, և կ'երթայ կը
վերջանայ 'ի Գողգոթա :

Բայց բոլոր այս ճամբաներն նեղ ու
անկանոն շինուած են, տեղ տեղ միայն
յատակած և այն ալ գէշ կերպով : Տու-
ներն ուրիշ բան չեն, բայց եթէ կաւա-
յին հողոյ կամ քարի ծանր զանգուած-
ներ : Սաստիկ ցած են և ոմանք միայն
պատուհան ունին և անոնք ալ միշտ
վանդակապատ :

Երուսաղէմ գեղեցիկ և մեծագործ
յիշատակարաններով զարդարուած է,
որոնց մէջ գլխաւորն է Եկեղեցին Յա-
րոշբեան, կամ Սրբոյ-Գերեզմանին,
որ ունի իր մէջ ուրիշ երկու եկեղեցի,
զեկեղեցին Գողգոթայ, և զեկեղեցին
Գիշտոյ Ս. Խաչին, որոց վրայ ահա
պիտի խօսիմք :

Սրբոյ Յարութեան Եկեղեցին ամե-
նահին է, որոյ ոչ ոք կրնայ հակառա-
կիլ : Մեծն Կոստանդիանոս քրիստո-
նէական կրօնքը մինչև կայսերաց աթո-
ռը բարձրացնելով, քրիստոնէութիւնը
որ մինչև այն ժամանակ գետնադամ
բաններու մէջ ծածկուած էր, պատեհ

պտնալով կանգնեց մէկէն իր յաղթա-
նակը իր խանձարրոց երկրին մէջ: Կոս-
տանդիանոս և իր մայրն Հեղինէ լե-
ցուցին զՊաղեստին մեծագործ շէնքե-
րով, նուիրելով զամենքն ալ 'ի պաշ-
տօն աստուածային. յորս գերազանցեց
Ս. Յարութեան եկեղեցին, որոյ շինու-
թիւնը աւարտեցաւ յամին 335:

Բայց 615ին Շահարպարզ, Պարսից
թագաւորին խոսրով Բն վիսաան, տիրե-
լով Պաղեստինու, որով և Երուսաղեմի,
բոլոր ուրիշ եկեղեցեաց հետ Ս. Յա-
րութեան եկեղեցին ալ այրել տուաւ.
այլ երբ կայսրն Հերակլիոս նուաճեց
զՊարսիկս և տիրեց նուիրական քաղա-
քին, առջինէն աւելի հոյակապ շինեց
զայն: Արաբացի տիրապետողք, չորս
դար ամբողջ յարգեցին այս նուիրա-
կան յիշատակարանը. բայց յամին
1010, խալիֆֆայն Եգիպտոսի Ալ-Հա-
քեմ-Պիւսիւմ-Ալլահ (իշխան հրամանաւ
Աստուծոյ), նշանաւոր իր կարգէ դուրս
անդուծ բարբոցն, պատուիրեց որ կոր-
ծանեն Սրբոյ Յարութեան եկեղեցին.
բայց վերջէն յամին 1046 Ալ-Մու-
համմադ-Պիւսիւմ (Յաղթող Աստու-
ծով) խալիֆֆայն՝ դարձեալ կանգնեց:
Երբոր Սալահադին կրկին անգամ ձեռք
ձգեց զԵրուսաղեմ, բոլոր եկեղեցիքը
մզկիթի փոխեց, յարգելով միայն Ս.
Յարութեան եկեղեցին: Վերջապէս յա-
մին 1808 մարտի 12, ահաւոր կրակ մը
մոխիր դարձուց Եկեղեցւոյն մեծագոյն
մասը, և մնացած մասերուն ալ ծանր
վնաս հասուց, և միայն գերեզմանը
անարատ մնաց: Հիմակուան շէնքը, որ
մաս մը նորէն շինուեցաւ, և մաս մը
նորոգեցաւ մէկէն կրակէն վերջը, այլ
և այլ տեսակ ճարտարապետութեանց
բաղադրութիւն մ'է, սկսեալ Կոստան-
դիանոսի ժամանակէն մինչև մեր օրերը:

Թէպէտ Սրբոյ Յարութեան Եկեղե-
ցւոյն զարմանալի գմբէթն քաղքին ա-
մեն կողմէն կը տեսնուի, բայց դժուա-
րին է մուտքը, վասն զի գրեթէ ամեն
կողմանէ յաւելուածոյ շէնքերով չըջա-
պատուած է: Արեւելեան կողմէն միայն

կը մտցուի եկեղեցին, ուր ընդարձակ
գաւիթ մը կայ, և անոր դիմաց, երկու
կամարով զոթական ճակատ մը: Դռ-
ներէն մին պատով զոցուած է, և միւսը
մէջտեղէն պատուհան մ'ունի, ուսկից
կը հաղորդակցին արտաքինոց հետ ար-
գելեալ ժամերուն. այս դրան վրայ ե-
ղած հարթ քանդակ նկար մը կը ներ-
կայացնէ Յիսուսի յաղթանակաւ Երու-
սաղեմ մտնելը: Գաւիթին մէջ կը տես-
նուի օճման քարը, որոյ վրայ տարա-
ծեցաւ Յիսուսի մարմինը և օծուեցաւ
գերեզման դրուելէն առաջ: Այս յիշա-
տակարանը, որոյ վրայ միշտ կանթեղ-
ներ կը վառին, երկաթէ վանդակով
զոցուած է: Դեռ աւելի յառաջելով, և
ահա կը մտնեմք եկեղեցւոյն թեքուն
մէջ, որ բոլորչի բաց միջոց մ'է, իբր ե-
րեսուն և հինգ քայլ տրամագծով: Ա-
սոր մէջ տեղը և ճիշտ այն ծակին տակ
ուսկից լոյս կու գայ, քսան ոտք երկայ-
նութեամբ և վեց լայնութեամբ պղտի
յիշատակարան մը կը բարձրանայ: Այս
յիշատակարանը կը զրաւէ ճիշտ այն
տեղը, ուր աւանդութիւնը կ'ըսէ թէ
եղած ըլլայ Յիսուսի գերեզմանը. բայց
հոն հասնելու համար, պէտք է քանի
մ'աստիճան վեր ելլալ, ուսկից մատու-
ռը կ'երթըցուի: Թերևս աւելորդ չըլլայ
ըսելն, թէ այս եկեղեցւոյն առաջին հի-
մնադիրը, Գողգոթա լեռան անհաւա-
սար մակերևոյթն հարթելու համար,
ստիպուած են տեղ մը տապալել և տեղ
մ'ալ ամրացնել լեռան զառ 'ի վայրը.
ջանալով որ ըստ կարելոյն ամենեւին
կամ ամենաքիչ կերպով փոխուի տեղ-
ւոյն երեսը: Մատրան արտաքին կողմը
քարէ կոճղ մը կայ, որ կը ցուցնէ այն
տեղը ուր կեցաւ Հրեշտակն աւետելու
երջանիկ կանանց՝ ֆրիստոսի յարու-
թիւնը: Ետքը վարագուրաւ զոցուած
ցած և նեղ դռնէ մը գերեզմանակաւ
սեկեակը կը մտցուի. որուն աջակողմը
խորան մը կայ նոր գերեզմանին վրայ
բարձրացած, ուր դրաւ Նիկողեմոս Յի-
սուսի մարմինը խաչէն վար առնելէն
ետքը: Գիշեր և ցերեկ կը վառին հոս
բաղմութիւն ոսկիէ և արծաթէ կան-

թեղներու, զորս ընծայած են իշխանը և թագաւորը:

Եկեղեցւոյն մեծ թևին արեւելեան կողմը, Արեւելեան եկեղեցւոյ Յունաց դասը կայ, որուն յատակին ճիշտ մէջ ձեղը կճով դրուագեալ կլորաձև նշան մը կայ, զոր Յոյնք կը կոչեն Պորտ երկրի, վասն զի կը համարին զայն իբրև կենդրոն երկրիս: Դասին հիւսիսակողմը կայ Մատուռն Երևան, որ այսպէս կը կոչուի, վասն զի ճիշտ հոն շինուած է, ուր յետ յարութեան երեւցաւ Յիսուս Մագդաղենացւոյն՝ մխիթարելու համար զինքը: Բաց 'ի գլխաւոր խորանէն կայ դրան մօտ ուրիշ մ'ալ, կանգնեալ 'ի յիշատակ ձաղանաց Յիսուսի, ուր կը տեսնուի մինչև ցայսօր այն կրանիդէ սեան կտորն որուն կապեցին ըզ-Յիսուս: Աւելի առաջ դէպ 'ի արեւելք կայ Խորան Բանտի, ուր բանտեցին զՅիսուս, երբ Հրեայք իր մահուան պատրաստութիւններն կ'ընէին. կայ ուրիշ խորան մ'ալ, այն տեղուանքը շինուած, ուր զինուորներն վիճակս արկին Յիսուսի պատմութեան վրայ: Այս խորանին աջակողմը գրեթէ երեսուն աստիճանաւ սանդուղ մը կայ ուսկից կ'իջեցուի ստորերկրեայ սրբարանը, որ կը կոչուի Մատուռ Ս. Հեղինեայ. և ուրիշ սանդուղ մ'ալ տասն և մի աստիճանաւ կը տանի լերան մէջ փորուած այն այրը՝ ուր գտաւ Ս. Հեղինէ երեք խաչերը:

Նորէն եկեղեցին 'ի վեր ելնելով, դէպ 'ի հարաւ ձախակողմը Նախարարիք անուամբ մատուռ մը կը տեսնուի, ուր մարմարիոնէ կոճղ մը կայ, որ կը կարծուի թէ ճիշտ այն ըլլայ որոյ վրայ նշատուցին զՅիսուս, երբ զինուորք թագաւորական նշաններն հագուեցնելէն առաջ նախատեցին զինքը և ապտակեցին: Ետքը միշտ դէպ 'ի ձախ նեղ և մուկ սանդուղ մը կ'ելլցուի Գողգոթա բլրոյն վրայ: Այս սանդուղը քսան և ինն աստիճան ունի. ոմանք փայտէ են և կը յենուն եկեղեցւոյ պատին, և այլք լերան մէջ փորուած են: Գողգոթա գրեթէ հարիւր քայլ հեռու է գերեզ-

մանէն. իր գագաթը քառասուն և վեց ոտք է և գրեթէ քառակուսի. որոյ վրայ երկու մատուռ կը բարձրանայ. որոց միոյն մէջ մանր քարերէ յօրինեալ նկար մը՝ կը նշանակէ ճիշտ այն տեղը, ուր զՅիսուս խաչին վրայ քամեցին. իսկ միւսոյն մէջ խորան մը կամ մարմարիոնէ սեղան մը կայ, այն կերպով ծակած, որ առանց դպչելու մէջէն կը տեսնուին այն երեք ծակերն ուր բարձրացան երեք խաչերն, և նաև այն պատառուածքը որ բայցուեցաւ Որդւոյն Աստուծոյ մահուամբ պատճառած ահաւոր երկրաշարժէն:

Սկեպտիկեանը պիտի ըսէ անտարակոյս, ինչպէս ըսած ալ է, որ այն ծակերն մարդկային գործ են. սակայն լերան պատառուածքը որչափ ալ հակառակութիւն կրէ, ամենայն դէպ ընդմէջէ վեր կը համարի զայն: Բայց կրօնասէր պանդուխտն այդպիսի երկրորդական սլարագայից ապացուցութիւնն կարևոր չի համարելով, շատ մը անհակառակելի վկայութեամբք կը համոզուի թէ այն տեղուանքն կատարուեցան Յիսուսի նեղութիւններն և անձկութիւններն: Եւ ընկղմելով այսպիսի մեծ մրտածութեան մէջ, կը խորհի այնպիսի պատահարի մը աշխարհիս վրայ ունեցած անթիւ և սքանչելի հետեանքներն:

Թերևս լաւագոյն կ'ըլլար, ըստ այժմեան խորհելոյ, որ այս և ուրիշ Պաղեստինու մէջ եղած կրօնական շէնքերուն առաջին հիմնադիրք այն սուրբ տեղուանքն օդոյ ֆլասակարութենէն և հեթանոսաց արհամարհանքէն միայն պաշտպանելն բաւական համարած ըլլային. վասն զի եթէ զանոնք իրենց առաջին վիճակին մէջ թողած ըլլային, առանց օտարոտի զարդերով բեռնաւորելու, բնականաբար շատ կը պակսէին սկեպտիկեանին երկրայանացնիւթերն: Նախկին քրիստոնէից ոչ այնչափ լուսաւորեալ եռանդն, որ յորդորեց զիրենք եկեղեցիներ ու խորաններ կանգնելով՝ կերպարանափոխ ընել այն սրբազան տեղուանքն, աւելի ֆլասեց կրօ-

նից ճշմարիտ շահուց, քան ինչ որ պիտի մնասէր ժամանակին ըրած աւերմունքներն: Մենք հիմա այս կերպ կը խորհիմք, բայց պէտք չէ մոռանալ որ այն եկեղեցւոյն՝ Գողգոթայի վրայ բարձրանալու ժամանակ, քրիստոնէից մէջ շատ աւելի կարծեաց միութիւն և կրօնք կար քան ինչ որ հիմա: Իրենց կրօնքը յետ երկար ժամանակ նշաւակ ըլլալու պատեհազմաց և հալածանաց, կոստանդիանոսի դառնալովն վերջապէս յաղթանակ կանգնեց հեթանոս աշխարհին մոլորամիտ կրօնից վրայ: Քրիստոնեայք մինչև այն ժամանակ գոհ եղած էին հեծելով միայն և ծածուկ հսկելով իրենց կրօնից խանձարուրդ եղող տեղեաց վրայ: Բայց երբոր կրցան ազատ և աներկիւղ պաշտել իրենց ճշմարիտ Աստուածը, շուտ մը մեծագործ յիշատակարաններով փառաւորեցին իրենց կրօնից խանձարոց տեղը:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՌԻԹԵՐՈՐԴ

(Տես Էրես 52:)

Կարևորութիւն:

Արմ շնչերակին վրայ քեզի խօսած ատենա, խօսեցայ նաև ողնայարին վրայ որ իբր անոր պատասպարանն է, ուստի ալ քեզի անոր վրայ խօսելու չէի, որովհետև ձեռքդ կռնակդ տանելով հեշտեալ կրնաս ըմբռնել թէ ինչ է: Ողնայարի սիւնակը անանկ տիրող յատկութիւններէն մէկն է, որ այն ամեն կենդանիք որ զնոյնը կը կրեն՝ հարկաւ շատ մը նմանութեանց ալ տէր կ'ըլլան, ուստի և նոյնը իբր դասակարգու-

թեան նշան ընտրած են առաջին մեծ խումբին: Կանխաւ ըսելու եմ քեզի թէ այդ խումբերն չորս հատ են, չորս բանակախումբ, որոնց բնապատումը խլրվ թաւորութիւնն անունը կու տան, և զանոնք չորս ճիւղերու կը նմանցնեն որ մի և նոյն բունէ ելլելով մէյմէկ կողմը կ'արձկուին:

Ուստի այսպէս նախ ողնաշարաց խմբաւորութիւնն ունինք: Այդ անանկ անուն մըն է որ ինքնիրեն կը բացատրուի:

Մենք բնականապէս այդ խմբաւորութեանը կը վերաբերինք, որուն գագաթնայն պսակն իսկ ենք. սակայն նոյնը նաև մեզմէ վար և շատ վար կը ձգի: Կապիկէն, եղէն, հաւէն ու մողեսէն անցնելով, մինչև ցգորտ և ձուկ կը ձգի, որովհետև ողնայարը յատուկ է բոլոր այս արարածոց: Թէ գորտ մը մեզի հետ շատ նմանութիւն ունենայ՝ չեւրենար, և սակայն ըստ որում ողնաւոր կենդանի՝ մեզի հետ նմանութեան կէտեր ունի, որոնց վրայ կ'աժէ խօսիլ: Առ հասարակ ամեն ողնաւոր կենդանիք գլուխ մը ունին, հանդերձ ըղեղով որ մարմնոյն ամեն դին իր հրամաններն կ'ուղարկէ. ամենը ներքին կմախք մ'ուսին, որ է ըսել մէկմէկու յարեալ ոսկերց շարք մը, որ իբր հաստատուն հիմ մը կը ծառայեն, որուն վրայ կը յենուն բոլոր գործարանները. ամենը՝ չորս անդամ ունին, ըսել կ'ուղէի. սակայն օձը անդիէն դուրս կ'ելլէ ինչպէս թէ ուղէր ազդել ինծի որ ուշադիր ըլլամ և միանգամայն ուղենար ծաղրաբանել մեր այս տղայական բաժանմանց կարգաւորութեան պիտոյքը, որոնց մէջ առհասարակ ամեն կենդանիք զետեղելու կը ջանանք: Սակայն գոնէ ամենքը, առ հասարակ առանց բացառութեան սիրտ մ'ունին, հանդերձ իր ցանցակերպ արիւնային անօթներովը. և կարմիր արիւն մըն ալ կրկին կերպարանօք, շրնչերակային ու երակային. նաև ասկէ զատ ալ մարսողական խողովակ մը՝ որ գրեթէ մերինին պէս գործ կը կատարէ: Այդ կէտին նկատմամբ չեմ պնդեր,